

Հայտարարություն

Մրցույթ՝ «ՀՀ Արարատի մարզի Հայանիստի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում հայոց լեզու և գրականություն (13 դասաժամ), դասվար (21 դասաժամ), կերպարվեստ (3 դասաժամ), երաժշտություն (5 դասաժամ), ֆիզկուլտուրայի (11 դասաժամ), ինֆորմատիկայի (4 դասաժամ) աշխարհագրություն (13.5 դասաժամ), թվային գրագիտություն և համակարգչային գիտություն (6 դասաժամ), մաթեմատիկայի (11 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ րստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի:

Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1),
 - մեկ լուսանկար 3x4 չափի,
 - բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
 - անձը հաստատող փաստաթուղթ
 - «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ առկայության դեպքում,
 - ինքնակենսագրություն (Ձեւ 5),
 - այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
 - ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
 - հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
 - որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:
- Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք: Փաստաթղթերն ընդունվում են սեպտեմբերի 23-ից մինչև հոկտեմբերի 4-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 13:30-ից 19:00-ն, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:
- Մրցույթը տեղի կունենա **հոկտեմբերի 8-ին՝ ժամը 14:00-ին**, «ՀՀ Արարատի մարզի Հայանիստի միջնակարգ դպրոցում» ՊՈԱԿ-ում: Հասցեն՝ գ. Խաչփար, 5-րդ փողոց 15-րդ շենք: Տեղեկությունների համար զանգահարել՝ (093) 66-66-25 հեռախոսահամարով: